ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-24-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) / 2019թ. դեկտեմբերի 22-24-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «ՌՏ-Ինվեստ Տրանսպորտային Համակարգեր» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Զամկով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   «Պլատոն» ճանապարհային վճարման էլեկտրոնային համակարգի վերաբերյալ քննարկումներին մասնակցելու նպատակով

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   «Պլատոն» վճարման էլեկտրոնային համակարգը և դրա՝ Հայաստանի Հանրապետությունում ներդնելու հարցը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Այցի ընթացքում հանդիպել եմ «ՌՏ-Ինվեստ Տրանսպորտային Համակարգեր» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Զամկովի հետ:
   Ընկերությունը շնորհանդեսների տեսքով ներկայացրեց «Պլատոն» վճարման էլեկտրոնային համակարգը, ինչպես նաև՝ Ռուսաստանի Դաշնությունում համակարգի ներդրման պատմության, կատարված փոփոխությունների և ստացված արդյունքների վերաբերյալ:
   Այցելեցինք նաև Տվեր քաղաքում գտնվող «Պլատոն» վճարման էլեկտրոնային համակարգի մոնիտորինգի և կառավարման կենտրոն՝ տեղում ծանոթանալու համակարգի տեխնիկական հնարավորություններին, կառավարմանը, փոխադրումների (կշռման) և տուգանքների ձևակերպման գործընթացներին:
   «ՌՏ-Ինվեստ Տրանսպորտային Համակարգեր» ՍՊԸ-ն իր պատրաստակամությունն է հայտնել նույն համակարգը ներդնել Հայաստանի Հանրապետությունում: Քննարկվել են Հայաստանում համակարգի ներդրման հետ կապված անհրաժեշտ միջոցառումները և կատարվել են համապատասխան հաշվարկներ (համակարգի ներդրման համար կպահանջվի մոտ 9 ամիս):

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Այցի արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա հանդիպումները Երևանում անցկացնելու վերաբերյալ:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ենթակառուցվածքներից օգտվելու համար տրանսպորտային միջոցների ճանապարհային հարկի վճարման էլեկտրոնային համակարգի ներդրումից հետո կդյուրացվեն բեռնափոխադրումները:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

26 դեկտեմբերի 2019թ.